ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 10.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 50/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Երվադա» ՍՊԸ-ի 19.04.2017թ. և Սահակ Գևորգյանի 21.04.2017թ. ներկայացրած բողոքները (այսուհետ նաև՝ ԳԲԽ-50/17) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի 27.04.2017թ. առարկությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.05.2017թ. թիվ ԴՎԱ/1283 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, պարզեց հետևյալը.

1. **<u>«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 19.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն, «Երվադա» ՍՊԸ-ն և Ա/Ձ Նարեկ Մալյանը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել

«Էքսպրես Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից), 2-րդ չափաբաժնով՝ «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 5-ի թիվ 1.2 որոշմամբ հաստատվել են Ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին պամապատասխանության գնահատման արդյունքները, ըստ որոնց՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Այսպիսով, ըստ Ընկերության՝ խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 65-րդ և 69-րդ կետերով սահմանված պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում

մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ ավիասպասարկման ծառայությունները կամ, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ճիշտ չի կատարել գործողությունները և ճիշտ չի գնահատել «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի և «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը, քանի որ վերջիններիս կողմից Ընթացակարգին ներկայացրած մասնակցության հայտերի N 3.1 հավելվածներում մասնագիտական փորձառության հայտարարություններով նշված ապրանքների մատակարարումները, ինչպես նաև տվյալ որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, նախկինում կատարված պայմանագրերը, չեն հանդիսանում համանման (նմանատիպ) և մասնակիցները չեն բավարարում Կարգի 65-րդ կետով

սահմանված պահանջներին, քանի որ տվյալ մասնակիցների նշված ապրանքների մատակարարումները չեն դասվում «Սպառազինության օժանդակ ապրանքանյութական միջոցներ» տնտեսական գործունեության տեսակի համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում, ինչը չի համապատասխանում Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջներին: «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի և «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը չեն հանդիսանում նաև Ընթացակարգի հրավերի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով սահմանված համանման համարվող փայտե արկղերի, փայտե այլ արտադրանքների մատակարարման պայմանագրեր: Վերջիններիս կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը կարող էին հանդիսանալ համանման, եթե Ընթացակարգն իրականացվեր «Գրասենյակային գույք» կամ «Գրասենյակային և կենցաղային կահույք» շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում:

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափությունը կայանում է նրանում, որ Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջներով գնահատող հանձնաժողովը չպետք է «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի և «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գործարքները համարեր համանման (նմանատիպ) և մասակիցների որակավորումը գնահատեր բավարար, քանի որ տվյալ մասնակիցների նախկինում կատարված պայմանագրերը չեն դասվում «Սպառազինության օժանդակ ապրանքանյութական միջոցներ» տնտեսական գործունեության տեսակի համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին, քանի որ չեն համապատասխանում Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջներին: Այսինքն, սույն պարբերությամբ նշված պայմանների կիրառման պարագայում Պատվիրատուն Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների համաձայն՝ հայտերը կգնահատեր անբավարար և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով «Երվադա» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով կճանաչեր առաջին տեղ զբաղեցրած մասնակից, համաձայն՝ Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջների:

Ելնելով վերոգրյալից՝ «Երվադա» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների և 05.04.2017թ. թիվ 1.2 որոշմամբ ընտրված մասնակիցների ճանաչման մասով որոշումները, Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգը:

«Երվադա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 27.04.2017թ. ժամը 16:20-ին նշանակված ԳԲԽ-50/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

2. Սահակ Գևորգյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

Սահակ Գևորգյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 21.04.2017թ. ներկայացրած համանման բողոքով հայտնել է, որ մասնակիցների հայտերը կազմվում և գնահատվում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, այլ գործող որոշումներով և նորմատիվ ակտերով:

Բողոքաբերը հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կոնսորցիումի պայմանագրով չի հստակեցված կողմերից յուրաքանչյուրի պարտականությունը, ինչպես նաև երկու կողմերը չեն վերցնում «Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն» պարտականությունը և այլն, իսկ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ գնային առաջարկը սխալ է լրացված եղել, այն է՝ տառերով և թվերով գրվածները չեն համապատասխանել իրար:

Սահակ Գևորգյանը որպես բողոքի իրավական հիմք նշել է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունը և 45-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահակ Գևորգյանը խնդրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Երվադա» ՍՊԸ-ի և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի հայտերը

բավարար գնահատելու մասին որոշումները համարել ապօրինի, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով պայմանագրի կնքումը:

3. «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 26.04.2017թ. գրությամբ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն միջնորդել է վերջինիս ընդգրկել ԳԲԽ-50/17 բողոքի քննության գործով՝ որպես երրորդ անձ:

«Էքսպրես Շին» ՍՊԸ-ն մասնակցելով 27.04.2017թ. ժամը 16:20-ին տեղի ունեցած ԳԲԽ-50/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, ներկայացրել է 27.04.2017թ. գրավոր առարկություն «Երվադա» ՍՊԸ-ի 19.04.2017թ. և Սահակ Գևորգյանի 21.04.2017թ. ներկայացված բողոքների դեմ և հայտնել, որ նշված բողոքները ներկայացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի խախտումով և դրանք ի սկզբանե չպետք է քննության նպատակով ընդունվեին վարույթ:

Մասնակիցը, որպես իր կողմից ներկայացված առարկության հիմք, նշել է Օրենքի 9-րդ հոդվածը, 45-րդ հոդվածը, 48-րդ հոդվածի 2-րդ մասը:

«Էքսպրես Շին» ՍՊԸ-ն նշել է, որ վերջինս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2017թ. տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել: Այնուհետև 05.04.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հրապարակվել է Ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշումը, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 15.04.2017թ. ժամը 00:00-ն ներառյալ:

Անգործության ժամկետի լրանալուց հետո Մասնակցի և Պատվիրատուի միջև կնքվել է պայմանագիր:

«Երվադա» ՍՊԸ-ն 2017թ. ապրիլի 19-ին ներկայացրած բողոքով խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգը, ինչպես նաև դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2017թ. կայացած նիստի թիվ 3

արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ճանաչման և 05.04.2017թ. ապրիլի 5-ի թիվ 1.2 որոշմամբ ընտրված մասնակիցների ճանաչման մասով Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Սահակ Գևորգյանը 21.04.2017թ. ներկայացրած բողոքով խնդրել է Ընթացակարգի մասնակիցներ «Երվադա» ՍՊԸ-ի և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատված որոշումները համարել ապօրինի, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգով պայմանագրի կնքումը մինչև սույն բողոքի ավարտը:

Վերլուծելով վերոգրյալ կարգավորումները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն հանգում է այն եզրակացության, որ «Երվադա» ՍՊԸ-ն և Սահակ Գևորգյանն ըստ էության բողոքարկում են պայմանագիր կնքելու մասին որոշումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ նա խնդրել է հայտերը բավարար գնահատված որոշումները համարել ապօրինի, այսինքն՝ նաև 05.04.2017թ. որոշումը, որի հիմքով կնքվել է պայմանագիրը:

Վերը նշվածը նշանակում է, որ վերջիններս բաց են թողել օրենքով բողոքարկման համար տրված ժամանակահատվածը, այն է՝ անգործության ժամանակահատվածը:

Տվյալ դեպքում անգործության ժամանակահատվածը սահմանված է եղել մինչև 15.04.2017թ. ժամը 00:00-ն ներառյալ, իսկ վերջիններս իրենց բողոքները ներկայացրել են այդ ժամկետից հետո:

Հատկանշական է նաև բողոքաբերների կողմից ներկայացված պահանջների բովանդակությունը:

«Երվադա» ՍՊԸ-ն խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ խնդրել է դադարեցնել Ընթացակարգի պայմանագրի կնքումը մինչև սույն բողոքի ավարտը:

Անհասկանալի է, թե առաջին և, թե երկրորդ դեպքում ինչպես պետք է կասեցվի մի գործողություն, որն արդեն իսկ ավարտված է: Այսինքն՝ ավարտված է Ընթացակարգը, քանի որ Պատվիրատուի և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր: Այս մասով վերջիններիս կողմից ներկայացված պահանջը ևս անհիմն է:

Ելնելով վերոգրյալից՝ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն նշել է, որ Ընթացակարգն օրինական է և Հանձնաժողովին խնդրել է նախ մերժել բողոքների հետագա քննությունը կամ քննության արդյունքում մերժել դրանք՝ չկիրառելով ժամանակավոր միջոց, քանի որ արդեն իսկ ընթացակարգն ավարտված է և առկա է կնքված պայմանագիր:

4.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.05.2017թ. թիվ ԴՎԱ/1283 գրությամբ ներկայացված բողոքների վերաբերյալ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 19.04.2017թ. «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի և «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի հետ արդեն իսկ կնքվել են պայմանագրեր՝ համապատասխանաբար «ՇՀԱՊՁԲ-4/5-1» և «ՇՀԱՊՁԲ-4/5-2» ծածկագրերով, որոնց վերաբերյալ բոլոր անհրաժեշտ հայտարարություններն, արձանագրությունները և նշված գործընթացին վերաբերող բոլոր այլ փաստաթղթերը սահմանված կարգով հրապարակված են:

Ինչ վերաբերում է «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքին, ապա Պատվիրատուն գտնում է, որ վերջինիս փաստարկները հիմնավորված չեն, իսկ գնահատող հանձնաժողովի գործողությունները եղել են իրավաչափ, մասնավորապես, Ընթացակարգն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ. ապրիլի 13-ի թիվ 220-Ն հրամանով հաստատված ցանկի 1-ին կետի 1.18 ենթակետով նախատեսված «Սպառազինությանն օժանդակ ապրանքանյութական միջոցներ» անվանացանկում գրանցված մասնակիցներից հարցում կատարելու միջոցով: Քանի որ վերը նշված ենթակետն ի տարբերություն նշված հրամանի մնացած կետերի չունի համապատասխան բացվածք, հստակեցման նպատակով նմանատիպ համարվող պայմանագրեր են սահմանվել փայտե արկղերի, փայտե այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը, քանի որ տվյալ անվանատողն իր մեջ ենթադրում է սպառազինության հետ առնչվող ապրանքների բավականին լայն սպեկտր (սկսած զինամթերքից և վերջացրած սպառազինության և հատուկ տեխնիկայի պահեստամասերից):

Պատվիրատուն նշել է, որ առաջին տեղ զբաղեցրած ընկերությունները որպես նմանատիպ պայմանագիր և դրանց մատակարարումը հավաստող փաստաթղթեր ներկայացրել են կահույքի մատակարարման պայմանագրեր, որոնք պատրաստված են եղել փայտից և փայտյա հումք ունեցող նյութերից, ինչից ելնելով էլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դրական է գնահատել որակավորման փուլով ներկայացված փաստաթղթերը:

«Երվադա» ՍՊԸ-ն իր բողոքը ներկայացրել է անգործության ժամկետից 4 օր անց (անգործության ժամկետ սահմանված է եղել 06.04.2017թ.-15.04.2017թ.) հարկ է նշել, որ նշված ընկերությունն իր բողոքում անդրադարձել է այնպիսի տվյալների, որոնք գործող կարգով չեն հրապարակվում և հանձնաժողովի անդամների կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ մասնակցի չեն տրամադրվել: Բացի այդ, բողոքաբեր կազմակերպությունն իր կողմից ներկայացված մասնագիտական փորձառության մասին հայտարարության (Հավելված 3.1) մեջ նշել է, որ պատշաճ ձևով իրականացրել է փայտե այլ արտադրանքների մատակարարման պայմանագրեր: Ելնելով վերը նշվածից հարց է ծագում, եթե բողոքաբեր կազմակերպությունը համարում է, որ փայտե արկղերը, փայտե այլ արտադրանքները չեն դասվում «Սպառազինության օժանդակ ապրանքանյութական միջոցներ» գնման առարկայի շարքին, ապա ինչու է հենց ինքը պարտավորվել առաջին տեղ զբաղեցնելու դեպքում ներկայացնել փայտե այլ արտադրանքների մատակարարման պայմանագրեր և դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է նաև, որ «Երվադա» ՍՊԸ-ն չի օգտվել պարզաբանում ստանալու իր իրավունքից, այլ դիմել է համապատասխան միջոցների՝ առաջին տեղ զբաղեցրած չլինելու մասին տեղեկանալուց հետո:

Ելնելով վերոգրյալից, Պատվիրատուն հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի բողոքը հիմնազուրկ է և ենթակա է մերժման:

5. ԳԲԽ-50/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-50/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սպառազինության օժանդակ ապրանքանյութական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն, «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ն և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն:

2.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.03.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշվել է Ընթացակարգի արդյունքում 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էքսպրես շին» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.04.2017թ. թիվ 1.2 որոշմամբ հաստատված՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը Պատվիրատուի կողմից հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ ***05.04.2017թ.-ից մինչև 15.04.2017թ.:***

4. ***19.04.2017թ.*** ՀՀ պաշտպանության նախարարության և «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի միջև կնքվել է «ՇՀԱՊՁԲ-4/5-1» ծածկագրով պայմանագիր, ՀՀ պաշտպանության նախարարության և «Էքսպրես շին» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ՇՀԱՊՁԲ-4/5-2» ծածկագրով պայմանագիր, ինչի վերաբերյալ www.gnumner.am կայքում 22.04.2016թ. հրապարակվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով «Երվադա» ՍՊԸ-ի 19.04.2017թ. և Սահակ Գևորգյանի 21.04.2017թ. ներկայացրած բողոքները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, ***գնահատող հանձնաժողովի*** և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և ***որոշումները:***

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ ***նախքան պայմանագրի կնքումը*** բողոքարկելու պատվիրատուի և ***գնահատող հանձնաժողովի որոշումները*** գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը ***բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:***

«Երվադա» ՍՊԸ-ն 19.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով խնդրել է ***դադարեցնել***՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ճանաչման և 05.04.2017թ. թիվ 1.2 որոշմամբ ընտրված մասնակիցների ճանաչման վերաբերյալ կայացրած որոշումները, Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում ***պայմանագիր կնքելու մասին որոշումը:***

Սահակ Գևորգյանը 21.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով խնդրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Երվադա» ՍՊԸ-ի և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի ***հայտերը բավարար գնահատելու մասին***

որոշումները համարել ապօրինի, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով պայմանագրի կնքումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.05.2017թ. թիվ ԴՎԱ/1283 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի արդյունքում՝ ***19.04.2017թ.*** ՀՀ պաշտպանության նախարարությունը «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի հետ կնքել է «ՇՀԱՊՁԲ-4/5-1» ծածկագրով պայմանագիր, «Էքսպրես շին» ՍՊԸ-ի հետ կնքել է «ՇՀԱՊՁԲ-4/5-2» ծածկագրով պայմանագիր, ինչի վերաբերյալ www.gnumner.am կայքում 22.04.2016թ. հրապարակվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը:

Այսպիսով, հիմք ընդունելով Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի գնահատող հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ՝ **նախքան պայմանագրի կնքումը**, ինչպես նաև Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ընթացակարգով անգործության ժամկետն ավարտվել է 15.04.2017թ., ինչի արդյունքում՝ ***19.04.2017թ.*** ՀՀ պաշտպանության նախարարությունը «Ավանգարդ Կահույք» ՓԲԸ-ի հետ կնքել է «ՇՀԱՊՁԲ-4/5-1» ծածկագրով պայմանագիր, «Էքսպրես շին» ՍՊԸ-ի հետ կնքել է «ՇՀԱՊՁԲ-4/5-2» ծածկագրով պայմանագիր, ինչի վերաբերյալ www.gnumner.am կայքում 22.04.2016թ. հրապարակվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը, ուստի «Երվադա» ՍՊԸ-ի կողմից նման պահանջով 19.04.2017թ. ներկայացված բողոքն ուղղակիորեն հակասում է Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով և 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին և ենթակա է մերժման:

Բացի այդ, մինչև Խորհրդի կողմից ԳԲԽ-50/17 որոշման կայացումը «Երվադա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց բողոքում նշված փաստական հանգամանքն ապացուցելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Սահակ Գևորգյանի կողմից ներկայացրած բողոքով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Երվադա» ՍՊԸ-ի և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի ***հայտերը բավարար գնահատելու մասին որոշումներն ապօրինի համարելու պահանջին***, ապա Խորհուրդն Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նման որոշում կայացնելու լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երվադա» ՍՊԸ-ի 19.04.2017թ. և Սահակ Գևորգյանի 21.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքները մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Հովհաննիսյան Ռուզաննա**